ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 1300-Ա « 10 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ
ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈՒԴԱՊԵՇՏ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի 13.03.2025 թվականի Ն/12993-25, 04.04.2025 թվականի Ն/17783-25 գրությունները և Բուդապեշտի Բելվարոշ-Լիպետվարոշ համայնքի ղեկավարի հրավեր-նամակը՝ Բուդապեշտի երաժշտական փառատոնին մասնակցելու, ինչպես նաև Երևանի Կենտրոն վարչական շրջանի և Բուդապեշտի Բելվարոշ-Լիպետվարոշ համայնքի միջև հետագա համագործակցության հարցերը քննարկելու նպատակով.

1.Երևանի Կենտրոն վարչական շրջանի աշխատակիցներին գործուղել Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտ՝ հետևյալ կազմով.

1) 2025 թվականի մայիսի 25-ից 28-ը ներառյալ՝

Պետրոս Պետոյան Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար.

2) 2025 թվականի մայիսի 22-ից 25-ը ներառյալ՝

Արթուր Ջուլհակյան Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ.

2. Ընդունել ի գիտություն, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Կենտրոն վարչական շրջանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլհակյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ ավիատոմսի, որն իրականացվում է Կենտրոն վարչական շրջանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի բացակայության ընթացքում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Նիկոլայ Սարիբեկյանին:

4. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլիակյանի բացակայության ընթացքում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Նիկոլայ Սարիբեկյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ